

ՀՏԴ՝ 902.03

ԼԵՌՆԱԿԵՐՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

*Զարիկյան Նուշիկ<sup>1</sup>, Վարդանյան Բենիկ<sup>2</sup>, Դավթյան Ռուբեն<sup>3</sup>,  
Մանուկյան Սոնա<sup>1</sup>, Մարիբեկյան Մարիամ<sup>1</sup>*

- 1 ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
2 ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
3 Սոցիալական մարդաբանության Մաքս Պլանկի ինստիտուտ, Հալլե, Զաալե, ԳՖՀ

**Բանալի բառեր՝** Արագածի հյուսիսարևմտյան լանջեր, Լեռնակերտ, Վերի Բերդ, Վարի Բերդ, կենդանաբանություն, հնամիջավայր, բրոնզի դարի անասնապահություն, ուշ բրոնզի դար, վաղ հելլենիստական ժամանակաշրջան:

Սույն հոդվածում ուսումնասիրվել է Արագածի հյուսիսարևմտյան լանջերում գտնվող Լեռնակերտի հուշարձանախմբի 2019 թվականի պեղումներից հայտնաբերված մ.թ.ա. III-I հազարամյակներին վերաբերող կենդանաբանական մնացորդները, որոնք ենթարկվել են տեսակային, քանակական, համատեքստային վերլուծության և ԴՆԹ հետազոտության: Լեռնակերտի օրինակով հետազոտությունները ցույց են տվել վաղ բրոնզի, ուշ բրոնզի, վաղ և ուշ երկաթի դարերում անասնապահության, որսորդության և դրանց ածանցվող ոլորտների դերը հին հասարակությունների կյանքում:

**Նախաբան.** Լեռնակերտ գյուղը գտնվում է Շիրակի մարզում՝ Արագածի հյուսիսարևմտյան լանջին, ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա (Նկ. 1): Հուշարձանախումբը բաղկացած է բրոնզ-երկաթիդարյան երկու ամբոցներից,

դրանց շուրջը տարածվող դամբանադաշտերից, ջրաբաշխ հնագույն համակարգից, մեգալիթյան բնույթի այլ կառույցներից: Ամրոցներից Վարի Բերդը (բարձրությունը ծ. մ.՝ 2020 մ) գտնվում է գյուղից մոտ 0.4 կմ հարավ, իսկ Վերի Բերդը (բարձրությունը ծ. մ.՝ 2120 մ)՝ 2.5 կմ հարավ-արևելք, Վարի Բերդից՝ 1.2 կմ արևելք: Ամրությունները կառուցված են տարածքում աչքի ընկնող բնական ժայռոտ բլուրների հարթեցված գագաթներին (Նկ. 2)<sup>1</sup>:

Լեռնակերտում սիստեմատիկ պեղումները սկսվեցին 2019 թ., որտեղ հայգերմանական արշավախումբը<sup>2</sup> սկսեց ուսումնասիրել Վերի Բերդի, Վարի Բերդի բերդշեները և դրանց շրջակա դամբանադաշտերը: Վերի Բերդի առաջին պեղավայրը դրվեց ամրոցի հյուսիսային մասում: Հյուսիսարևելյան միջնաբերդի և ամրոցի միջև ընկած պարսպի վրա դրվեց երկրորդ պեղավայրը, իսկ միջնաբերդի ներսում՝ երրորդը: Վերի Բերդի հարավարևելյան հատվածում՝ հիմնապարսպից 3 կմ հյուսիս, տեղորոշվում է չորրորդ պեղավայրը: Հինգերորդ պեղավայրը գտնվում է ամրոցի հյուսիսարևմտյան միջնաբերդից երկու մետր արևելք: Վերջինս ընդգրկում էր պարսպից դեպի լանջն իջնող երկու հարթակները:

Վարի Բերդի առաջին պեղավայրը դրվեց ամրոցի հյուսիսային երկրորդ հարթակում՝ հիմնապարսպին կից:

Սույն ուսումնասիրության նպատակը Լեռնակերտի 2019 թվականից ստացված հնակենդանաբանական տվյալների հետազոտությունն է՝ Շիրակի բրոնզ-երկաթիդարյան հուշարձանների տվյալների համատեքստում:

Հողվածում քննության են առնվում նաև անասնապահությանը վերաբերող որոշ խնդիրներ:

#### **Հետազոտության մեթոդը**

Հնակենդանաբանական մնացորդներն ուսումնասիրվել են հողվածի առաջին հեղինակի կողմից՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության կենդանաբանության լաբորատորիայում: Ոսկրային մնացորդները խմբավորվել և նույնացվել են ըստ Vereshchagin, 1967, Heptner, 1988, Hillson, 2009 and Mashkour et al 2015<sup>3</sup> աշխատություններում նկարագրված մեթոդների:

<sup>1</sup> 2019 թ. պեղումների հիմնական արդյունքները տե՛ս **Vardanyan B., Davtyan R., Manukyan S., Saribekyan M.**, Lernakert: ein neues archaologisches Projekt in Shirak // *Archaeology of Armenia in Regional Context*, Avetisyan P., Bobokhyan A. (ed.), Yerevan, 2020, pp. 187-199.

<sup>2</sup> Հետազոտություններն իրականացվել են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Սոցիալական մարդաբանության Մաքս Պլանկի ինստիտուտ, Հալլե, Զաալե, ԳՖՀ համատեղ արշավախմբի միջոցներով:

<sup>3</sup> **Vereshchagin N.**, *The Mammals of the Caucasus. A History of the Evolution of the Fauna*, Jerusalem, 1967; **Heptner, V.G., Nasimovich, A.A., Bannikov, A.G., Hoffman, R.S.**, *Mammals of the Soviet Union, Vol. I. mithsonian Institution Libraries and National Science Foundation*, 1988, Washington; **Hillson S.**, *Mammal Bones and Teeth: An Introductory Guide to Methods of Identification* (UCL Institute of Archaeology

### Հետազոտության սկզբնաղբյուրներ

Լեռնակերտի Վերի Բերդ հիմնադրման ժամանակաշրջանն ըստ ամրոցի կառուցվածքի համեմատական և խեցեղենի ձևատիպաբանական հետազոտության, վերաբերում է Հայաստանի ուշ բրոնզի դարի (այսուհետ՝ ՈԻԲԴ) երրորդ փուլին (մ.թ.ա. 14-13-րդ դարեր): №5 պեղավայրը գտնվում էր ամրոցի հյուսիսային մուտքից արևմուտք՝ ընդգրկելով պարսպաշարերով սահմանազատված ձեռակերտ երկու հարթակները (մակարդակ I-III, երկ.՝ 13 մ, լայն.՝ 1.5 մ):

№5 պեղավայրի 1-ին մակարդակից (№1 հարթակ) հայտնաբերվել են մի ոչխարի, մի կովի և մի եվրոպական այծյամի, իսկ նույն պեղավայրի 2-րդ մակարդակում նույնացվել են 2 ոչխարի, 2 այծի, 2 կովի, մի ձիու և մի եվրոպական այծյամի մնացորդներ: 3-րդ մակարդակից հայտնաբերված մնացորդների տեսակային կազմը ներկայացված է ընդամենը մի ոչխարի և մի ձիու առանձնյակներով:

Վերի Բերդ ամրոցի բնակեցման ավարտական փուլն ըստ խեցեղեն արտադրանքի համեմատական ուսումնասիրության և թվագրության ռադիոածխածնային տվյալների, վերաբերում է վաղ հելլենիստական ժամանակաշրջանին՝ մ.թ.ա. 5/4-րդից 3-րդ դդ. (մ.թ.ա. 364-204<sup>4</sup>): Այս դարաշրջանին են վերաբերում Վերի Բերդի №1-4,6 պեղավայրերը և №5 պեղավայրի վերին շերտերը (Նկ. 3):

№1 պեղավայրում հայտնաբերվել է ուղղանկյուն հատակագծով կացարան՝ չոր շարվածքով կառուցված պատերով (Աղ. 1):

Այս պեղավայրի կենդանական մնացորդները տեսակային կազմով բազմազան են. նույնացվել են մի ձիու, 5 ոչխարի, 4 այծի, 5 կովի, 3 խոզի, մի ազնիվ եղջերուի, եվրոպական մի այծյամի և մի կրծողի ոսկրային մնացորդներ<sup>5</sup>:

№2 և №3 պեղավայրերը գտնվում էին ամրոցի արևելյան միջնաբերդի պատերի վրա: Երկրորդ և երրորդ պեղավայրերով փորձեցինք հստակեցնել ամրոցի միջնաբերդի ժամանակագրական, կառուցվածքային խնդիրները:

Երկրորդ պեղավայրում կենդանական կազմը ներկայացված է ընդամենը մի այծի և մի կովի մնացորդներով, իսկ №3-ում՝ ոչխարի, կովի և խոզի առանձնյակներով: Չորրորդ պեղավայրում հաստատագրվել են մի ձի, մի կովի և մի ոչխարի առանձնյակ, իսկ ամրոցի հյուսիսարևելյան լանջին պեղված №2 դամբանից՝ մի ոչխարի և մի կովի ոսկրային մնացորդ (Աղ. 1):

Publications (LCP), University College London institute of Archaeology, 2009, p. 64; **Mashkour, M., Beech, M.** (Eds.), (2015). Archaeozoology of the Near East 9. Chapter 11: Examples of Animal Exploitation in Urban Sites During the Bronze Age. Oxbow Books.

<sup>4</sup> Մանհայմի Կուրտ-Էնգելհորն կենտրոնի (ԳՖՀ) լաբորատորիա, Lab. Nr. 44413, Armenien, LK-019-0002, cal. BC 364-204.

<sup>5</sup> Կրծող կենդանու գոյությունը մշակութային շերտում պայմանավորված է պեղավայրում այդ կենդանիների մեծաթիվ բներով:

Այսպիսով՝ ըստ նախնական տվյալների, Լեռնակերտի Վերի Բերդը կառուցվել է մ.թ.ա. 14-13-րդ դարերում, մինչդեռ այլ տվյալները ցույց են տալիս ամրոցի շահագործման բավականին լայն ժամանակաշրջան, ընդհուպ մինչև մ.թ.ա. 5/4-րդից 3-րդ դդ.) (Նկ. 3):

Պատկերը այլ էր Լեռնակերտի Վարի Բերդում և դրան հարակից տարածքներում: Վարի Բերդի հյուսիսային երկրորդ հարթակում դրված առաջին պեղավայրի տվյալներով, տարածքն ունեցել է բնակեցման երեք փուլ՝ վաղ բրոնզի դար (այսուհետ՝ ՎԲ) (ներկայացված է մշակութային շերտով), ՈԻԲ (Վարի Բ. №1 դամբան) և ՎԵԴ-ը (Նկ. 3, Աղ. 2):

Վաղբրոնզիդարյան մշակույթը Լեռնակերտում ներկայացված է միաշերտ հնավայրով, որտեղից հայտնաբերված խեցեղենի և մետաղական առարկայի համեմատական ուսումնասիրությունը տարածաշրջանի հայտնի մյուս հնավայրերի հետ թույլ է տալիս բնակավայրի գոյության ժամանակահատվածը տեղադրել ՎԲ դարի II փուլում (Կուր-Արաքս II, 2900-2600 թթ. մ.թ.ա.)<sup>6</sup>: Վաղբրոնզիդարյան բնակավայրի №2 պեղավայրում նույնացվել է ընդամենը կովի մեկ առանձնյակի ոսկորներ (Աղ. 2):

Ամրոցի բնակեցման և կառուցման հիմնական փուլը վերաբերում է ՎԵ ժամանակաշրջանին (մ.թ.ա. 12-10-րդ դարեր): Վարի Բերդի առաջին պեղավայրից կենդանաբանական մնացորդները ներկայացված են մեկ այծի, մեկ կովի, մեկ խոզի և մեկ այծյամի մնացորդներով:

Այսպիսով՝ ըստ 2019 թվականի պեղումներից ստացված նախնական տվյալների, Լեռնակերտի տարածքը բնակեցվել է ՎԲ երկրորդ փուլում (ԿԱ II): ՎԲ և ՎԵ վերաբերող կենդանաբանական տվյալների սակավության պատճառով դեռևս չենք կարող խոսել տնտեսության մեջ անասնապահության և որսորդության դերի մասին: ՈԻԲ-ում, ըստ Վերի Բերդի տվյալների, ընտանի կենդանիներից զարգացած էր խոշոր և մանր եղջերավոր անասունների և ձիերի բուծումը: Առավել խոսուն է վաղից լինիստական ժամանակաշրջանին վերաբերող տվյալները, ըստ որի՝ Շիրակի բարձրլեռնային այս հնավայրում ի հայտ են գալիս ընտանի և վայրի կենդանիների տեսակների մնացորդներ (Աղ. 1):

### **Հետազոտության արդյունքները**

Կենդանիների տեսակային կազմը

Կենդանաբանական նյութն ուսումնասիրելու և կենդանիների տեսակները որոշելու համար ուսումնասիրվել են 1348 անատոմիական միավոր, որոնցից

<sup>6</sup> Smith A., Badalyan R., Avetisyan P., The Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies, Vol. 1: The Foundations of Research and Regional Survey in the Tsaghkahovit Plain, Armenia, Oriental Institute Publications (OIP), Vol. 134, The Oriental Institute of the University of Chicago, 2009, p. 34.

մատչելի և տիպորոշիչ էին 714-ը (ընտրության 53%-ը), ձևախեղված/մասնատված՝ 636-ը (ընտրության 47 %-ը):

Կենդանիներն ընտրություն ներկայացված են ութ տեսակով: Ընդհանուր առմամբ՝ գրանցվել է 56 առանձնյակի մնացորդ, դրանցից ընտանի են 21-ը, որոնցից՝ մանր և խոշոր եղջերավոր անասուն (այսուհետ՝ ՄԵԱ, ԽԵԱ) (13 ոչխար, 8 այծ, 16 կով/ցուլ)<sup>7</sup>, 6 ձի (*Equus caballus*) և 6 խոզ (*sus scrofa domestica*), իսկ վայրի կենդանիներից՝ 1 ազնիվ եղջերու (*Cervus elaphus*), 5 եվրոպական այծյամ (*Capreolus capreolus*) և մեկ կրծող (Աղ. 1-2, 6)<sup>8</sup>:

Վերի Բերդի №2 ուշբրոնզիդարյան դամբանում, աճյունի գանգի արևելակողմում դրված էին 6-8 տարեկան խոշոր եղջերավոր անասունի (*B. taurus taurus*) ձախակողմյան երեք կողերը, երկու սրունքները կամ ծնկի «խաղեր (*lateralen trochlea*): Վարի բերդի №1 դամբանի լիցքից<sup>9</sup> հայտնաբերվել են ձիու (*Equus caballus*) և կովի (*B. taurus taurus*) մնացորդներ, իսկ Վարի Բերդի ամրոցի երկրորդ դարավանդի հետախուզական №1 պեղավայրից հայտնաբերվել են մի այծի (*Capra hircus*), խոզի (*sus scrofa domestica*), կովի (*B. taurus*) և եվրոպական այծյամի (*Capreolus capreolus*) ոսկորներ (Աղ. 6):

Ի տարբերություն Հայաստանի բրոնզ-երկաթիդարյան ժամանակաշրջանի կենդանաբանության համեմատաբար մասշտաբային ուսումնասիրության՝ հելլենիստական և անտիկ ժամանակաշրջանի հուշարձանների վերաբերյալ տվյալները սակավաթիվ են: Այնուամենայնիվ, Լեռնակերտի վաղ հելլենիստական ժամանակաշրջանի (մ.թ.ա. 5/4-3-րդ դարեր) տվյալների համեմատական ուսումնասիրությունը Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձանի տվյալների հետ, տալիս է հետևյալ պատկերը. ընտանի կենդանիներից գերակշռող է խոշոր եղջերավոր անասունների ոսկորների քանակը, որին հաջորդում են մանր եղջերավորները, ապա ձիու մնացորդները (Աղ. 3): Ստացված համեմատական տվյալները վկայում են, որ մ.թ.ա. I հազարամյակի երկրորդ կեսում Հայաստանի հին հանրությունների կյանքում ԽԵԱ և ՄԵԱ շարունակում էին մնալ սննդի ապահովման գլխավոր դերակատար:

<sup>7</sup> Տարածաշրջանի բրոնզ-երկաթիդարյան հնավայրերում նկատվում են ԽԵԱ գլխաքանակի գերակշռություն ՄԵԱ հանդեպ: Համեմատության համար տե՛ս **Obermeier H.**, Tierknochenfunde aus Horom, Armenia von der frühen Bronzezeit bis in späturartäische Zeit // Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Band 38, 2006, pp. 141-209; **Генджян А.**, Итоги изучения видового состава животных из поселений эпох бронзы и железа Ширакского марза (раскопки 2004-2015гг.) // Հայաստանի կենսաբանական հանդես, 2017, №69 (3). սրբ. 58-62.

<sup>8</sup> **Hillson S.**, Mammal Bones and Teeth: An Introductory Guide to Methods of Identification (UCL Institute of Archaeology Publications (LCP), University College London institute of Archaeology, 2009, p. 64.

<sup>9</sup> Վարի Բերդի հարավային և հարավարևմտյան լանջերում տարածվող ուշբրոնզիդարյան դամբանադաշտը իջեցված է վաբրոնզիդարյան բնակավայրի մեջ:

### **Կենդանական մնացորդների քանակական ուսումնասիրություն**

Հիմնվելով գրանցված և ճանաչելի կենդանական ոսկորների քանակական հաշվարկի վրա՝ նկատելի է, որ ընտրություն գերակշռողը կողոսկրերն են (n=108): Քննվող ընտրություն առկա են մեծ քանակությամբ ատամներ (n=72) և ստորին ծնոտի մասեր (n=79), որոնց մորֆոմետրիկ տվյալներն են մեծապես նպաստել տեսակների որոշման գործընթացում:

Հատկանշական է, որ կենդանիների գանգերը մասնատված են (n=70): Գանգերի առկայությունն ապացուցում է, որ բնակավայրում նշված կենդանիները եղել են սննդի հիմնական աղբյուրը, որ օգտագործվել են նաև տնտեսական (երկրագործական) նպատակներով:

Լեռնակերտի կենդանական ընտրություն վերջույթները ներկայացված են եզակի նմուշներով: Պահպանված հազվադեպ օրինակների վրա ակնհայտ են մեխանիկական ազդեցության հետքեր, որոնք վկայում են մսագործության մեջ դրանց օգտագործված լինելու մասին:

### **Ոսկորների վրա ձևափոխությունների հետքերի ուսումնասիրություն**

Լեռնակերտի ոսկրային մնացորդները ենթարկվել են նաև հետքաբանական հետազոտության, ըստ որի՝ առանձնացվել են ոսկորների վրա ներգործության հետևյալ տեսակները՝

- *Մսագործության հետքեր:* Մեծ քանակությամբ ոսկորների վրա նկատվել են մսագործության հետքեր: Կարելի է եզրակացնել, որ բնակավայրից հայտնաբերված ոսկորները եղել են սննդային մնացորդներ (Նկ. 4ա-գ):

- *Ախտաբանություն:* Ոսկրային ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են հիվանդությունների մի քանի ախտանշաններ (Նկ. 5):

- *Գիշատիչների հետքեր:* Մնացորդների ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են գիշատիչների ատամների հետքերի փաստագրմամբ ոսկորներ: Հաստատագրումը վկայում է բնակավայրի հնամիջավայրի ու հատկապես ֆաունայի բազմազանության մասին (Նկ. 6):

- *Կլիմայական հետքեր:* Կլիմայական հետքեր կրող ոսկրային մնացորդներ չեն գրանցվել:

- *Մարսողության հետքեր:* Որոշ ոսկորների եզրերին (ոչ մեծ քանակությամբ) նկատելի են գիշատիչ թռչունների մարսողական ֆերմենտների հետքեր, ինչը վկայում է տարածքում մշտական բնակություն հաստատած գիշատիչ թռչունների առկայության մասին<sup>10</sup>:

<sup>10</sup> 2019-2020 թթ. աշխատանքների ընթացքում Վերի Բերդ ամրոցի հարևանությամբ նկատվել են ուրուր, բազե և այլ թռչուններ: Լեռնակերտի Խորունկ գետի ձախափում առկա է նաև «Հավքի

- *Այրված (սևացած) ոսկորներ*: Գրանցվել են քիչ քանակով այրված ոսկորներ, որոնք նույնպես սննդային մնացորդներ են, իսկ մրոտվածությունը կրակի ներգործության արդյունք է (Նկ. 7):

- *Գործիքներ և պերճանքի առարկաներ*: Գրանցվել են ոսկրային մնացորդներ, որոնց վրա նկատելի են մարդածին ներգործության հետքեր: Վերջիններս օգտագործվել են կա՛մ որպես աշխատանքային գործիք, կա՛մ որպես զարդ: Լեռնակերտից հայտնաբերվել են այժի կամ ոչխարի ֆալանգներից պատրաստված կախիկներ (Նկ. 8): Ոսկրից այս առարկաների վրա անցքերը բացված են ստորին մասում: Անցքերը համաչափ են՝ 3-5 մմ տրամագիծ: Վերջիններս վրա մշակման այլ հետքեր չեն նկատվում: Այս կախիկներն իրենց գուգահեռներն ունեն մ.թ.ա. II-I հազարամյակների տարբեր հուշարձաններում: Մասնավորապես հիշատակելի են Հռոմի ՈԻԲ-ՎԵ<sup>11</sup>, Կարճաղբյուրի մ.թ.ա. VI-IV դդ.<sup>12</sup> և այլ հնավայրերի օրինակները: Վերջիններս հավանաբար եղել են հմայիլներ՝ ծառայելով չարը վանելու կամ գուշակություններ անելու համար:

#### **Կենդանիների տարիքային կազմ**

Հիմնվելով Ի. Սիլվրիի՝ կենդանիների տարիքի որոշման մեթոդների վրա՝ կարելի է նշել, որ որոշված առանձյակների 84%-ը մատղաշ են (Brothwell et al, 1969<sup>13</sup>), 5%-ը՝ հասուն, իսկ ծեր առանձյակները կազմում են ընտրույթի 11%-ը (Աղ. 4-):

#### **Ձիաբուծությունը Լեռնակերտում (ԴՆԹ տվյալներ)**

Շիրակի մարզի քննվող ժամանակահատվածի տարբեր հնավայրերում հայտնաբերվել են ձիերի տարբեր տեսակների մնացորդներ:

Հայաստանի տարածքը եղել է ձիաբուծության տարածաշրջանային նշանավոր կենտրոն: Լեռնակերտում ձիերի թիվը հասնում է վեցի, որոնցից մեկը հայտնաբերվել է վաղբրոնզիդարյան շերտից, երկուսը վերաբերում են ուշ բրոնզի դարին, երեքը՝ վաղ հելլենիստական ժամանակաշրջանին:

Արագած լեռան լանջերի տարբեր հուշարձաններից ձիերի ոսկրային մնացորդներ հայտնի են Հռոմի, Ծաղկահովիտի, Գեղարտտի ՈԻԲ-ՎԵ դարի

---

բներ» կոչվող բլրաշղթա, որտեղ մշտապես բնակություն են հաստատել ուրուրները և բազեները (K-38-124-Բ-գ):

<sup>11</sup> Obermaier 2006: 165, Abb. 38, 40.

<sup>12</sup> Կարապետյան Ի., Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ. (ըստ ՀՀ տարածքում կատարված հնագիտական պեղումների), Պատ. խմբ.՝ Բ.Ն. Առաքելյան, Հայաստանի հնագիտական հետազոտություններ, հ. 19, Եր., «Գիտություն» հրատ., 2003, էջ 84, Աղ. 54.12:

<sup>13</sup> Brothwell D., Higgs E. S., Grahame Cl., Science in archaeology: a survey of progress and research. Chapter 6. The Ageing of Domestic Animals. Thames and Hudson, London P. 283-302.

շերտերից<sup>14</sup>: Ըստ Ազատանի (12-6 դդ. մ.թ.ա.) և Հայկաձորի (9-7/6 դդ. մ.թ.ա.) 2004-2015 թթ. պեղումների տվյալներով, ՎԵԴ-ում Ազատանում նույնացված ձիերի թիվը հասնում է 18-ի, իսկ ուշերկաթիդարյան շրջանում՝ 7-ի (Հայկաձոր)<sup>15</sup>: ՎԲԴ հնավայրերում քիչ քանակությամբ, սակայն հայտնաբերվել են ձիերի ոսկրային մնացորդներ (քանակը տատանվում է 1-17 առանձնյակի սահմաններում): Մասնավորապես հիշատակելի են Գեղարտի<sup>16</sup>, Մեծ Մեպասարի<sup>17</sup>, Շենգավիթի, Մեծամորի, Գառնիի, Թագավորանիստի և Մաստարայի տվյալները<sup>18</sup>: Այսպիսով՝ առկա տվյալները վկայում են, որ Արագածի հյուսիսարևմտյան լանջերը, ի դեմս Լեռնակերտի, առնվազն մ.թ.ա. II հազարամյակում մաս են կազմել ձիու ընտելացման և շահագործման հայաստանյան ընդհանուր գործընթացներին, ինչը հետագա դարերում դառնում է առավել ցայտուն և նշանակալի:

Լեռնակերտի վաղ հելլենիստական ժամանակաշրջանի շերտերից (մ.թ.ա. 5/4-3-րդ դարեր) ձիու ոսկորներ հայտնաբերվել են №№1, 4, 6 պեղավայրերից:

Վերի Բերդից հայտնաբերված ձիու ատամը հետազոտվել է Թուլուզի (Ֆրանսիա) մոլեկուլյար մարդաբանության կենտրոնում<sup>19</sup>: Ըստ հետազոտության՝ պարզվել է, որ խոսքը գնում է հովատակի (արու ձի) առանձնյակի մասին: Կենդանու ԴՆԹ կազմը թույլ չի տալիս հստակորեն առանձնացնել նրա ենթատեսակը՝ տեսակի խառնվածության և պահպանվածության պատճառով, սակայն այն իր գենետիկ կազմով մոտ է *Equus caballus* (ընտելացված ձի) տեսակին:

Հայաստանում հելլենիստական և անտիկ ժամանակաշրջանի ձիաբուծության վերաբերյալ տեղեկություններ են պարունակում նաև հունական աղբյուրները: Հիշատակելի են Քսենոփոնի տեղեկությունները Հայաստանում բուծվող ձիերի մասին, որոնք ավելի փոքր էին պարսկական ձիերից, սակայն ավելի առույգ<sup>20</sup>: Ստրաբոնը հիշատակում է ձիաբուծության ծավալներին նպաստող

<sup>14</sup> Obermaier 2006:152.Tab. 1; Badalyan R., Avetisyan P. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region. BAR International Series 1697, Oxford, 2007:270, 108.

<sup>15</sup> Генджян 2017, 60, Табл. 2.

<sup>16</sup> Monahan B., The faunal remains, in: Badalyan R. et. all., Village, fortress, and town in Bronze and Iron Age Southern Caucasia: A preliminary report on the 2003–2006 investigations of Project ArAGATS on the Tsaghkahovit Plain, Republic of Armenia // Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Band 40, 2008, pp. 90-97, Tabl. 6a.

<sup>17</sup> Генджян 2017, 60, Табл. 2.

<sup>18</sup> Եսայան Ս., Կառավարտիկ գործամսերը և հեծելագորը Հին Հայաստանում, Եր., ԵՊՀ հրատ., 1994, էջ 11:

<sup>19</sup> Հետազոտության համար շնորհակալություն ենք հայտնում Թուլուզի (Ֆրանսիա) մոլեկուլյար մարդաբանության կենտրոնի աշխատակից, պրոֆ. Լ. Օրլանդոյին:

<sup>20</sup> Քսենոփոն, Անաբասիս, IV. V, 31-36:



ընդարձակ արոտավայրերի գոյության մասին, որոնք չեն զիջում Մարաստանին<sup>21</sup>: Ըստ նրա՝ սատրապական Հայաստանը որպես տարեկան տուրք Աքեմենյան արքունիք էր ուղարկում 20 հազար նժույգ: Հայաստանի մ.թ.ա. I հազարամյակի այլ հուշարձանների տվյալները ևս վկայում են, որ ձիաբուծությունը Շիրակում ունեցել է կարևոր տնտեսական և ռազմական նշանակություն:

**Եզրահանգում.** Ըստ Լեռնակերտի 2019 թվականի պեղումներից ձեռք բերված կենդանաբանական տվյալների ուսումնասիրության՝ կարող ենք նշել, որ տարածաշրջանում անասնապահությունը տնտեսության զարգացած ճյուղերից մեկն էր: Կենդանաբանական այս տվյալները տեղեկություններ են հաղորդում նաև Լեռնակերտի հին հանրային սննդային կազմի մասին: Ըստ այդ տվյալների՝ սննդակարգում օգտագործվել են տարատեսակ միս և մսամթերք, որտեղ գերիշխող էին մանր և խոշոր եղջերավոր անասունից ստացված բարիքները: Վերջինիս գերիշխող լինելը վկայում է նաև բուծման բարձր մակարդակը, քանի որ ԽԵԱ-ն ակնհայտորեն ունեին մսի բերքատվության առավելություններ: Վերջիններս օգտագործվել են նաև երկրագործության մեջ՝ որպես լծկան կենդանիներ: Բացի մսամթերքից՝ նշված կենդանիների մնացորդները վկայում են տվյալ ժամանակահատվածի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացվածության մասին (կաշեգործություն, մանածագործություն և կաթնամթերքի վերամշակում ևն): Որսը քննվող հուշարձանում և ժամանակահատվածում շարունակում է կրել երկրորդային բնույթ:

Չնայած ձիաբուծության մասին տվյալները դեռևս քիչ են, սակայն ըստ ԴՆԹ հետազոտության, հնարավոր եղավ պարզել Լեռնակերտում բուծված տեսակը, որը տարածաշրջանում հանդիպող հիմնական տեսակն էր:

<sup>21</sup> Մտրաբոն, Աշխարհագրություն, XI, 14.9:

## ИТОГИ ИЗУЧЕНИЕ ПАЛЕОЗООЛОГИЧЕСКИХ МАТЕРИАЛОВ ИЗ РАСКОПОК 2019 ГОДА В ЛЕРНАКЕРТЕ (ШИРАК, АРМЕНИЯ)

*Зарикян Н. А., Варданян Б. В., Давтян Р. Д.,  
Манукян С. М., Сарибекян М. С.*

**Ключевые слова:** *Северо-восточные склоны горы Арагац, Лернакерт, Вери Берд, Вари Берд, зоология, археосреда, поздний бронзовый век, раннеэллинистическое эпоха*

По зоологическим данным, полученным при раскопках в Лернакере в 2019 году, можно сказать, что животноводство было одной из наиболее развитых отраслей экономики региона в эпоху бронзы и железа. Эти зоологические данные также предоставляют информацию о составе питания древних сообществ Лернакерта. Согласно этим данным, в рационе использовались различные виды мяса и мясных продуктов, в которых преобладали товары, полученные от крупного и крупного рогатого скота. О преобладании последних свидетельствует высокий уровень селекции, так как крупный рогатый скот явно имела преимущества в производстве мяса.

В подборке восемь видов животных всего зарегистрированы остатки 56 особей, из которых 21 домашний, из них: мелкий рогатый скот (13 овец, 8 коз, 16 коров / быков), 6 лошадей (*Equus caballus*), 6 свиней (*sus scrofa domestica*) и диких животных: 1 благородный олень (*Cervus elaphus*), 5 европейских оленей (*Capreolus capreolus*) и один грызун (Табл. 1-2, 6).


## A PRELIMINARY REPORT ON THE FAUNAL REMAINS FROM LERNAKERT (2019 excavations) (Shirak, Armenia)

*Zarikyan N. H., Vardanyan B. V., Davtyan R. D.,  
Manukyan S. M., Saribekyan M. S.*

**Key words:** *North-West slopes of the Mt. Aragats, Lernakert, Veri Berd, Vari Berd, zoology, Environmental archaeology, Bronze age animal husbandry, Early Bronze Age, Late Bronze Age, Hellenistic Age, Early Armenian Period.*

According to the zoological data gathered during the excavations in Lernakert in 2019, it is possible to say that animal husbandry was one of the developed economic areas in the area. Zoological data also provide information on the composition of nutrition of ancient Lernakert. According to the same data, different types of meat and meat products were used in daily rations, most of which consisted of products from small and large cattle. The prevalence of the latter is evident in high quality breeding, as large cattle had superiority in meat production.

There were 8 types of animals. In total 56 individual animals were registered, out of which 21 were domestic, from them: small and large cattle (13 sheep, 8 goats, 16 cows/bulls), 6 horses (*Equus caballus*), and 6 pigs (*sus scrofa domestica*) and the rest were wild animals: 1 red deer (*Cervus elaphus*), 5 European roe deer (*Capreolus capreolus*) and one rodent (Tables 1-2, 6).




**Նկար 1** Լեռնակերտի դիրք (© Լեռնակերտ նախագիծ)



**Նկար 2** Վերի Բերդի ընդհանուր պատկերը, տեսքը արևելքից (© Լեռնակերտ նախագիծ)

**Լեռնակերտի կենդանաբանությունն ըստ 2019 թվականի պեղումների արդյունքների**



**Նկար 3** Լեռնակերտի կենդանական կազմի փոփոխությունն ըստ դարաշրջանների (ըստ որոշված առանձնյակների քանակի)


**Աղյուսակ 1** Վերի Բերդի կենդանական մնացորդների տեսակային կազմն ըստ պեղավայրերի (NISP՝ որոշված տեսակների քանակը, MNI՝ նվազագույն առանձնյակների քանակ)

Տեսակ	Վերի Բերդ, պեղ. №1		Վերի Բերդ, պեղ. №2		Վերի Բերդ, պեղ. №3		Վերի Բերդ, պեղ. №4		Վերի Բերդ, պեղ. №5 (1)		Վերի Բերդ, պեղ. №5 (2)		Վերի Բերդ, պեղ. №5 (3)		Վերի Բերդ, դամբ. №2	
	NI	M	NI	M	NI	M	NI	M	NI	M	NIS	M	NI	M	NI	M
	SP	NI	SP	NI	SP	NI	SP	NI	SP	NI	P	NI	SP	NI	SP	NI
<i>Ovis aries</i>	65	5	-	-	9	1	22	1	10	1	24	2	8	1	16	1
<i>Capra hircus</i>	13	4	3	1	-	-	-	-	-	-	5	2	-	-	-	-
<i>Bos primigenius</i>	17	5	4	1	8	1	25	1	12	1	40	2	-	-	4	1
<i>Equus caballus</i>	13	1	-	-	-	-	5	1	-	-	6	1	6	1	-	-
<i>Sus scrofa domestica</i>	37	3	-	-	7	1	-	-	-	-	-	-	-	-	-	-
<i>Cervus elaphus</i>	9	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
<i>Capreolus capreolus</i>	26	1	-	-	-	-	-	-	8	1	9	1	-	-	-	-
<i>Rodentia</i>	15	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Total	347	21	7	2	24	3	72	3	30	3	84	8	14	2	20	2


**Աղյուսակ 2** Վարի Բերդի կենդանական մնացորդների տեսակային կազմն ըստ պեղավայրերի (NISP՝ որոշված տեսակների քանակը, MNI՝ նվազագույն առանձնյակների քանակ)

Տեսակ	Վարի Բերդ, դամբ. №1		Վարի Բերդ պեղ. №1		Լեռնակերտ, պեղ. №2	
	NISP	MNI	NISP	MNI	NISP	MNI
<i>Ovis aries</i>	-	-	-	-	-	-
<i>Capra hircus</i>	-	-	5	1	-	-
<i>Bos primigenius</i>	4	1	40	1	1	1
<i>Equus caballus</i>	1	1	-	-	-	-
<i>Sus scrofa domestica</i>	-	-	2	1	-	-
<i>Cervus elaphus</i>	-	-	-	-	-	-
<i>Capreolus capreolus</i>	-	-	3	1	-	-
Total	5	2	50	4	1	1

**Աղյուսակ 3** Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի հուշարձանների ֆաունիստիկ նյութերի համեմատական պատկերն ըստ ընտանի կենդանիների տվյալների<sup>22</sup>




**Աղյուսակ 4** Կենդանիների տարիքային պատկերը





<sup>22</sup> Աղյուսակում նշված են ոսկորների քանակը: Արտաշատի, Կապսի և Հողմիկի տվյալների աղբյուրը՝ Манасерова, Н., Фауна млекопитающих античной и средневековой Армении // Հայաստանի կենսաբանական հանդես, 1991, №44 (3), стр. 163-166, табл. 1.

Աղյուսակ 5 Կենդանիների տարիքային պատկերը.




Աղյուսակ 6 Կենդանական մնացորդների տեսակային կազմի ընդհանուր պատկերը.






**Նկար 4** Ոսկրային մնացորդների վրա մսագործության հետքեր (ա-գ) (©Զարիկյան)




**Նկար 5** Ախտավոր ոսկրային մնացորդ (©Զարիկյան)

**Նկար 6** Ոսկրային մնացորդների վրա գիշատիչների ներգործության հետքեր (©Զարիկյան)



**Նկար 7** Այրված ոսկորներ (©Զարիկյան)



Lernakert 2019, Veri Berd, Tr. 06, Loc. 01

**Նկար 8** Ոսկրից պատրաստված կախիկ (©Լեռնակերտ նախագիծ)

## REFERENCES

1. **Strabon**, Ashkharhagrut'yun, XI, 14.9 (**In Armenian**).
2. **Gendzhyan A.**, Itogi izucheniya vidovogo sostava zivotnykh iz poseleniy epokh bronzy i zheleza Shirakskogo marza (raskopki 2004-2015gg.) // Hayastani kensabanakan handes, 2017, №69 (3), str. 58-62. (**In Russian**).
3. **Yesayan S.**, Karramartik zoramastery yev hetselazory Hin Hayastanum, Yerevan, YePH hrat., 1994. (**In Armenian**).
4. **Karapetyan I.**, Hayastani nyut'akan mshakuyt'y m.t'.a. VI-IV dd. (yst HH taratsk'um katarvats hnagitakan peghumneri), Pat. khmb. B.N. Arrak'elyan, Hayastani hnagitakan hetazotut'yunner, Hator 19, Yerevan, «Gitut'yun» hrat., 2003. (**In Armenian**).
5. **K'senofon**, Anabasis, IV. V, 31-36. (**In Armenian**).

*Ընդունվել է՝ 29. 01.2020*  
*Գրախոսվել է՝ 06.02.2020*  
*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

### Տեղեկություններ հեղինակների մասին

**Նուշիկ ԶԱՐԻԿՅԱՆ**՝ կենսաբանական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող,  
Էլ. հասցե՝ nzarikian@gmail.com

**Բենիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ**՝ պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,  
Էլ. հասցե՝ benik.vardanya@iae.am

**Ռուբեն ԴԱՎԹՅԱՆ**՝ Սոցիալական մարդաբանության Մաքս Պլանկի ինստիտուտ,  
Հայլե, Զաալե, ԳՖՀ, հետազոտող, Էլ. հասցե՝ rouben.davtyan@gmail.com

**Սոնա ՄԱՆՈՒԿՅԱՆ**՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
հետազոտող, Էլ. հասցե՝ sonamanukyan1992@gmail.com

**Մարիամ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
հետազոտող, Էլ. հասցե՝ mariamgsaribekyan@gmail.com